Կալիֆոռնիայի ոչ կոմերցիոն կատարողական արվեստի դրամաշնորհային ծրագիրը ֆինանսավորվում է Կալիֆոռնիա նահանգի կողմից և կառավարվում է Կալիֆոռնիայի Փոքր բիզնեսի փաստաբանի գրասենյակի (CalOSBA) կողմից: Կիրառվում են համապատասխանության չափանիշներ:



CALIFORNIA

**Nonprofit Performing Arts Grant Program**

APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

# Ծրագրի և դիմումի ուղեցույց

Թարմացվել է 07.08.22-ին

# Ծրագրի համառոտ նկարագրություն

CALIFORNIA
Nonprofit Performing Arts Grant Program
APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

Կալիֆոռնիայի ոչ կոմերցիոն կատարողական արվեստի դրամաշնորհային ծրագրի նպատակն է դրամաշնորհներ տրամադրել կատարողական արվեստի իրավասու ոչ առևտրային կազմակերպություններին, ինչպես սահմանված է Ծրագրով՝ խրախուսելու համար աշխատողների զարգացումը:

Այս Ծրագրի համար դրամաշնորհները կտրամադրվեն հերթականության սկզբունքով («ով առաջինը դիմի, նա առաջինը կստանա»), սահմանված գումարի չափով՝ կախված 2019 հարկային տարում հայտատուի տարեկան համախառն եկամուտից:

Սույն բաժնում նկարագրված պայմաններով տրամադրված դրամաշնորհը պետք է օգտագործվի միայն հետևյալ նպատակների համար.

1. Աշխատողների հետ կապված ծախսերի համար, որտեղ ներառված են աշխատավարձի ծախսերը, առողջապահական նպաստները, հիվանդության, առողջական խնդրի կամ ընտանեկան հանգամանքներով պայմանավորված վճարվող արձակուրդը և ապահովագրավճարները,

2. Աշխատավարձի հաշվարկման կենտրոնացված ծառայությանը մուծումների կամ վճարումների համար,

3. Կադրերի ընտրության, վերապատրաստման, զարգացման և մարդկային ռեսուրսների հետ կապված այլ ծախսերի համար, և/կամ

4. Աշխատողների հետ կապված այլ գործառնական ծախսերի կամ սարքավորումների համար:

# Սահմանումներ

«**Կատարողական արվեստի իրավասու ոչ կոմերցիոն կազմակերպություն**» նշանակում է 501(c)(3) կոդով նշված շահույթ չհետապնդող կազմակերպություն, որը համապատասխանում է որակավորված փոքր բիզնեսի չափանիշներին՝ 12100.82 բաժնի (g) ենթաբաժնի համաձայն, որի տարեկան համախառն եկամուտը կազմում է ոչ ավելի, քան երկու միլիոն դոլար ($2 000 000): Իրավասու ոչ կոմերցիոն կազմակերպությունը կարող է նշված լինել Հյուսիսամերիկյան արդյունաբերության դասակարգման համակարգի (NAICS) հետևյալ կոդերից մեկով, ինչպես նշված է սուբյեկտի հարկային հայտարարագրում.

- 711110 - Թատերական ընկերություններ ու «Թատրոն և ընթրիք» տիպի ներկայացումներ ցուցադրող թատրոններ:
- 711120 - Պարային ընկերություններ:
- 711130 - Երաժշտական խմբեր և արտիստներ:
- 711190 - Կատարողական արվեստի այլ ընկերություններ:

# Համապատասխանության չափանիշներ

**Դրամաշնորհներ. Կատարողական արվեստի ոչ կոմերցիոն կազմակերպություններ**

Կատարողական արվեստի ոչ կոմերցիոն կազմակերպությունը պետք է առնվազն բավարարի հետևյալ չափանիշներին, որպեսզի իրավասու լինի ստանալու աշխատուժի զարգացման դրամաշնորհ Կալիֆոռնիայի ոչ կոմերցիոն կատարողական արվեստի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում.

1. Հայտատուն պետք է բավարարի հետևյալ պահանջներից մեկը՝
   i. պետք է համապատասխանի «Կատարողական արվեստի իրավասու ոչ ոմերցիոն կազմակերպության» սահմանմանը՝ համաձայն Ծրագրի ուղեցույցի, ինչը նշանակում է, որ Հայտատուն պետք է գրանցված լինի որպես 501c(3) կոդով նշված շահույթ չհետապնդող սուբյեկտ, որը համապատասխանում է որակավորված փոքր բիզնեսի չափանիշներին՝ Կալիֆոռնիայի կառավարության օրենսգրքի 12100.82 բաժնի (g) ենթաբաժնի համաձայն, տարեկան համախառն եկամուտը պետք է կազմի ոչ ավելի, քան երկու միլիոն դոլար (≤ 2 000 000) և նշված լինի Հյուսիսամերիկյան արդյունաբերության դասակարգման համակարգի (NAICS) հետևյալ կոդերից մեկով, ինչպես նշված է սուբյեկտի հարկային հայտարարագրում՝
      - 711110 - Թատերական ընկերություններ ու «Թատրոն և ընթրիք» տիպի ներկայացումներ ցուցադրող թատրոններ:
      - 711120 - Պարային ընկերություններ:
      - 711130 - Երաժշտական խմբեր և արտիստներ:
      - 711190 - Կատարողական արվեստի այլ ընկերություններ, կամ
   ii. հանդես գա որպես ֆինանսական հովանավոր այն սուբյեկտների համար, որոնք համապատասխանում են վերոնշյալ 1(i) ենթաբաժնում սահմանված պահանջներին, և

2. Հայտատուն կամ ֆինանսական հովանավորի դեպքում՝ տվյալ Հայտատուի ֆինասական հովանավոր հանդիսացող կազմակերպությունը սկսել է իր գործունեությունը նահանգում մինչև 2019 թվականի հունիսի 1-ը, ինչի մասին վկայում է իրավասու ոչ կոմերցիոն կատարողական արվեստի կազմակերպության պաշտոնական հայցադիմումի գրանցումը Կալիֆոռնիա նահանգի պետքարտուղարությունում:

# Տրամադրվող դրամաշնորհ. Գումարի չափը

CALIFORNIA
Nonprofit Performing Arts Grant Program
APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

**Դրամաշնորհի գումարը կտրամադրվի՝ հիմք ընդունելով կատարողական արվեստի իրավասու ոչ կոմերցիոն կազմակերպության կամ ֆինանսական հովանավորի դեպքում՝ տվյալ դրամաշնորհառուի իրավասու ֆինաասական հովանավոր հանդիսացող կազմակերպության տարեկան համախառն եկամուտը:**

| Կիրառելի դրամաշնորհներ | Տարեկան համախառն եկամուտը 2019 հարկային տարում |
|---|---|
| $25.000 | $1.001 - $100.000 |
| $50.000 | $100.001 - $1.000.000 |
| $75.000 | $1.000.001 - $2.000.000 |

# Պահանջվող փաստաթղթեր

CALIFORNIA
Nonprofit Performing Arts Grant Program
APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

**Որպեսզի Lendistry-ն կարողանա ստուգել դիմումը, հայտատուները պետք է վերբեռնեն հետևյալ բոլոր պահանջվող փաստաթղթերը՝**

1. Հայտատուի հավաստագիր (Ներբեռնել այստեղ),
2. Կառավարության կողմից տրված ինքնությունը հաստատող փաստաթուղթ,
3. Հարկերից ազատված կարգավիճակի ապացույց (501(c)(3)),
4. Բիզնես կազմակերպության ապացույց (առնվազն հետևյալներից որևէ մեկը)՝
   - Կազմակերպության գրանցման վկայական,
   - Կազմակերպության վկայական,
   - Բիզնեսի լիցենզիա,
   - Բիզնեսի մտացածին անվանումը,
5. Եկամուտների ապացույց (անփոփոխ և 2019 թվականի համար ներկայացված 990 հարկային հայտարարագիր), և
6. Ֆինանսական հովանավորի համաձայնագիր (եթե կիրառելի է):

**Կարևոր դիտողություններ՝ փաստաթղթերի վերբեռնման հետ կապված.**

1. Այս ցանկը սպառիչ չէ: Lendistry-ն կարող է կապ հաստատել ձեզ հետ էլեկտրոնային փոստով, հեռախոսով և/կամ տեքստային հաղորդագրությամբ (եթե ունի թույլտվություն)՝ պահանջելու լրացուցիչ փաստաթղթեր՝ ձեր դիմումում ներկայացված տեղեկությունները ստուգելու համար:
2. Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն PDF ձևաչափով:
3. Ֆայլի չափը պետք է լինի 15 ՄԲ-ից փոքր:
4. Ֆայլի անվան մեջ չի կարող լինել որևէ հատուկ նիշ (!@#$%^&*()_+):
5. Խնդրում ենք ներբեռնել և պահպանել Դիմումի հավաստագիրը՝ նախքան այն լրացնելը։



CALIFORNIA
Nonprofit Performing Arts Grant Program
APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

# Դիմումը ներկայացնելու խորհուրդներ

# Խորհուրդ #1. Ստուգեք ձեր NAICS կոդը

CALIFORNIA
Nonprofit Performing Arts Grant Program
APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

Իրավասու հայտատուները կարող են նշված լինել Հյուսիսամերիկյան արդյունաբերության դասակարգման համակարգի (NAICS) հետևյալ կոդերից մեկով, ինչպես նշված է սուբյեկտի հարկային հայտարարագրում՝

- **711110 – Թատերական ընկերություններ ու «Թատրոն և ընթրիք» տիպի ներկայացումներ ցուցադրող թատրոններ,**
- **711120 – Պարային ընկերություններ,**
- **711130 – Երաժշտական խմբեր և արտիստներ, կամ**
- **711190 – Կատարողական արվեստի այլ ընկերություններ:**

Ստուգելու համար ձեր NAICS կոդը, անցեք այստեղ՝ https://www.naics.com/search/:

Հայտատուն կամ ֆինանսական հովանավորի դեպքում՝ տվյալ Հայտատուի ֆինասական հովանավոր հանդիսացող կազմակերպությունը, որը ներկայումս դասակարգված է NTEE կոդով, կարող է օգտվել հետևյալ փաստաթղթից՝ որոշելու համար, թե Հյուսիսամերիկյան արդյունաբերության դասակարգման համակարգի (NAICS) որ կոդն է առավել կիրառելի իրենց բիզնեսի համար: **NTEE ԿՈԴՈՎ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ**



# Խորհուրդ #2. Նշեք վավեր էլփոստի հասցե

CALIFORNIA
Nonprofit Performing
Arts Grant Program
APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

**Համոզվեք, որ վավեր էլփոստի հասցե եք նշել, և որ այն ճիշտ է գրված դիմումում:**

- Ձեր դիմումի հետ կապված թարմացումները և լրացուցիչ ուղեցույցները կուղարկվեն ձեր տրամադրած էլփոստի հասցեին: Որոշ էլփոստի հասցեներ կարող է չճանաչել Lendistry-ի համակարգը, ինչը կարող է հանգեցնել ձեր դիմումի հետ կապված հաղորդակցության ուշացումներին:

Եթե ձեր դիմումում նշել եք սխալ կամ անվավեր էլփոստի հասցե, կապ հաստատեք մեր հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի հետ՝ 866-759-5320 հեռախոսահամարով՝ ձեր տվյալները թարմացնելու համար:

Նոր դիմում ՄԻ ներկայացրեք: Մի քանի դիմում ներկայացնելը կարող է դիտվել որպես հնարավոր խարդախություն և խաթարել ձեր դիմումի քննման գործընթացը:

## Անվավեր էլփոստի հասցեներ

Հետևյալ էլփոստի հասցեները մեր համակարգը չի ընդունի կամ ճանաչի՝

Էլփոստի հասցեներ, որոնք *սկսվում են* **info@-ով**
Օրինակ՝ info@mycompany.com

Էլփոստի հասցեներ, որոնք *վերջանում են* **@contact.com-ով** կամ **@noreply.com-ով**
Օրինակ՝ mycompany@contact.com
Օրինակ՝ mycompany@noreply.com

# Խորհուրդ #3. Ձեր փաստաթղթերը ներկայացրեք PDF ձևաչափով

**Պահանջվող բոլոր փաստաթղթերը հարկավոր է վերբեռնել Պորտալում <u>միայն PDF ձևաչափով:</u>**
Վերբեռնելիս փաստաթղթերը պետք է հստակ երևան, լինեն ուղիղ դիրքով և չպետք է ունենան շեղող ֆոն:

Կարևոր դիտողություններ՝ փաստաթղթերի վերբեռնման հետ կապված.

1. Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն PDF ձևաչափով (Կառավարության կողմից տրված ինքնությունը հաստատող փաստաթուղթը կարող է ներկայացվել PDF կամ JPEG ձևաչափով):
2. Ֆայլի չափը պետք է լինի 15 ՄԲ-ից փոքր:
3. Ֆայլի անվան մեջ ՉԻ ԿԱՐՈՂ լինել որևէ հատուկ նիշ (!@#$%^&*()_+):
4. Եթե ձեր ֆայլը պաշտպանված է գաղտնաբառով, դուք պետք է մուտքագրեք այն:

**Չունե՞ք սկաներ:** !
Խորհուրդ ենք տալիս ներբեռնել և օգտվել անվճար սկանավորման բջջային հավելվածից:

**Genius սկանավորում**
Apple | Սեղմեք այստեղ ներբեռնելու համար
Android | Սեղմեք այստեղ ներբեռնելու համար

**Adobe սկանավորում**
Apple | Սեղմեք այստեղ ներբեռնելու համար
Android | Սեղմեք այստեղ ներբեռնելու համար

## Օրինակ՝ Ճիշտ վերբեռնում




Փաստաթուղթը պետք է հստակ երևա, լինի ուղիղ դիրքով:

## Օրինակ՝ Սխալ վերբեռնում




1




2

1. Փաստաթուղթը ուղիղ դիրքով չէ:
2. Փաստաթուղթը պահել են պատուհանի դիմաց (շեղող ֆոն), և լուսանկարում ձեռք է երևում:

# Խորհուրդ #4. Օգտվեք Google Chrome-ից

CALIFORNIA Nonprofit Performing Arts Grant Program
APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

Լավ աշխատանքի համար օգտվեք Google Chrome-ից դիմումի ներկայացման ամբողջ գործընթացի ընթացքում:

Ուրիշ վեբ զննարկիչներ կարող են չաջակցել մեր ինտերֆեյսը և սխալներ թույլ տալ ձեր դիմումում:

Եթե դուք չունեք Google Chrome ձեր սարքում, կարող եք այն անվճար ներբեռնել այստեղից՝ https://www.google.com/chrome/:

Նախքան դիմումին անցնելը՝ կատարեք հետևյալ գործողությունները Google Chrome-ում՝

1. **Մաքրեք ձեր քեշ (գերօպերատիվ) հիշողությունը**
2. **Օգտագործեք ինկոգնիտո ռեժիմը**
3. **Ապաակտիվացրեք բացվող պատուհանների արգելափակիչը**

### Մաքրեք ձեր քեշ (գերօպերատիվ) հիշողությունը

Քեշ հիշողության մեջ պարունակվող ինֆորմացիան այն ինֆորմացիան է, որը պահպանվել է նախկինում օգտագործած վեբկայքից կամ հավելվածից և հիմնականում կիրառվում է զննարկման գործընթացն ավելի արագ դարձնելու համար՝ ինֆորմացիան ավտոմատ կերպով ավելացնելով: Սակայն, քեշ հիշողության մեջ պարունակվող ինֆորմացիան կարող է ներառել նաև հնացած տեղեկություններ, օրինակ՝ հին գաղտնաբառեր կամ նախկինում սխալ մուտքագրած տվյալներ: Սա կարող է սխալների առաջացման պատճառ դառնալ ձեր դիմումում և կարող է հանգեցնել նրան, որ դիմումը հնարավոր խարդախության կասկած հարուցի:

### Օգտագործեք ինկոգնիտո ռեժիմը

Ինկոգնիտո ռեժիմը թույլ է տալիս գաղտնի մուտքագրել ինֆորմացիան և թույլ չի տալիս, որպեսզի ձեր ինֆորմացիան հիշվի կամ պահպանվի քեշ հիշողությունում:

### Ապաակտիվացրեք բացվող պատուհանների արգելափակիչը

Մեր դիմումաձևում կան բազմաթիվ բացվող պատուհաններով հաղորդագրություններ, որոնք կիրառվում են ձեր տրամադրած տեղեկատվության ճշգրտությունը հաստատելու համար: Այս հաղորդագրությունները տեսնելու համար դուք պետք է ապաակտիվացնեք բացվող պատուհանների արգելափակիչը Google Chrome-ում:

# Ինչպես մաքրել քեշ (գերօպերատիվ) հիշողությունը



## Քայլ 1

Բացեք Google Chrome-ի նոր պատուհան, կտտացրեք վերևի աջ անկյունում գտնվող երեք կետերին և անցեք «**Կարգավորումներ**»:




## Քայլ 2

Անցեք «**Գաղտնիություն և անվտանգություն**», այնուհետև ընտրեք «**Մաքրել զննարկված տվյալները**»:




## Քայլ 3

Ընտրեք «**Մաքրել տվյալները**»:



# Ինչպես օգտագործել ինկոգնիտո ռեժիմը



## Քայլ 1

Կտտացրեք ձեր վեբ զննարկիչի վերևի աջ անկյունում գտնվող երեք կետերին, այնուհետև ընտրեք «**Նոր ինկոգնիտո պատուհան**»:




## Քայլ 2

Ձեր զննարկիչը կբացի Google Chrome-ի նոր պատուհան: Օգտագործեք ինկոգնիտո ռեժիմը՝ դիմումի լրացման ամբողջ գործընթացում:



# Ինչպես ապաակտիվացնել բացվող պատուհանների արգելափակիչը



## Քայլ 1

Բացեք Google Chrome-ի նոր պատուհան, կտտացրեք վերևի աջ անկյունում գտնվող երեք կետերին և անցեք «**Կարգավորումներ**»:




## Քայլ 2

Անցեք «**Գաղտնիություն և անվտանգություն**», այնուհետև ընտրեք «**Կայքի կարգավորումներ**»:




## Քայլ 3

Ընտրեք «**Բացվող պատուհաններ և վերահղումներ**»: Սեղմեք կոճակը, որպեսզի այն կապույտ դառնա, և կարգավիճակը «**Արգելափակվածից**» դառնա «**Թույլատրված**»:








CALIFORNIA
Nonprofit Performing Arts Grant Program

APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

# Դիմումի ներկայացման գործընթացը

# Մեր գործընկերները



Lendistry-ի գործընկերների թվում ընդգրկված են սոցիալապես պատասխանատու վարկատուներ և փոքր բիզնեսի խորհրդատվական և տեխնիկական աջակցություն տրամադրողներ, որոնք կօգնեն ձեզ և ձեր բիզնեսին հաջողության հասնել: Այստեղ մտնում են Կալիֆոռնիա նահանգի կողմից աջակցվող փոքր բիզնեսի աջակցության շատ կենտրոններ, որոնք առաջնահերթությունը տալիս են ֆինանսապես անկայուն բիզնես խմբերին տեխնիկական աջակցության ցուցաբերմանը:

Դուք կարող եք դիմել մեր գործընկերներից մեկին՝ ծրագրի ուղեցույցների հետ կապված լրացուցիչ աջակցության, դիմում ներկայացնելու, Lendistry-ի պորտալում նավիգացիայի և այլ հարցերով: **Ընտրեք միայն մեկ գործընկեր՝ կրկնակի դիմումներից խուսափելու համար:** Մի քանի դիմում ներկայացնելը կարող է դիտվել որպես հնարավոր խարդախություն և խաթարել ձեր դիմումի քննման գործընթացը:

Մեր գործընկերների մասին ավելին իմանալու համար և թե ինչպես կարող են նրանք ձեզ օգնել դիմել Կալիֆոռնիայի ոչ կոմերցիոն կատարողական արվեստի դրամաշնորհային ծրագրին, այցելեք այստեղ՝

https://canonprofitperformingarts.com/partners/

# Որտեղ դիմել

Դրամաշնորհի համար դիմելու համար այցելեք Ծրագրի վեբկայքը՝ https://canonprofitperformingarts.com/:

1. Նոր դիմում բացելու համար ընտրացանկում ընտրեք «**Դիմել**»: Դուք կվերհղվեք դեպի Lendistry-ի Դիմումների պորտալ (տե՛ս 22-րդ էջը):
2. Դուք ցանկացած ժամանակ կկարողանաք մուտք գործել և կառավարել ձեր դիմումը՝ սեղմելով «**Lendistry-ի պորտալ**»:

Կալիֆոռնիայի ոչ կոմերցիոն կատարողական արվեստի դրամաշնորհային ծրագրի կայքը նույնպես ունի տարբեր ռեսուրսներ, որոնք կուղղորդեն ձեզ դիմումի լրացման ամբողջ գործընթացում: Ռեսուրսները ներառում են՝

- Ծրագրի ուղեցույցներ
- Ծրագրի և դիմումի ուղեցույց
- Դիմումի հավաստագրի ներբեռնում
- Գործընկերների և վեբինարների ցանկ
- Հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի համարը և ժամերը
- Տեսանյութեր՝ ըստ պահանջի
- Հաճախակի տրվող հարցեր



# Ստեղծել պորտալի հաշիվ



Նախքան նոր դիմում բացելը, դուք պետք է հաշիվ ստեղծեք Lendistry-ի պորտալում:

**Ինչպես ստեղծել Lendistry-ի պորտալի հաշիվ**

## Քայլ 1

Սեղմեք «**Դիմել հիմա**»՝ հաշիվ ստեղծելու համար:

## Քայլ 2

Գրանցեք ձեր էլփոստի հասցեն և հեռախոսահամարը: **Այստեղ գրանցված էլփոստի հասցեն և գաղտնաբառը կլինեն ձեր մուտքի հավատարմագրերը Պորտալում**, ուստի շատ կարևոր է, որպեսզի դուք նշեք դրանք: **Ձեզ հարկավոր կլինի նաև այս բաժնում մուտքագրել իրական և գործող բջջային հեռախոսահամար**:

## Քայլ 3

Ձեզ կուղարկվի **հաստատման կոդ** SMS-ով/տեքստային հաղորդագրությամբ, որն անհրաժեշտ է ձեր հաշվի գրանցումն ավարտելու համար: Ձեր գաղտնիությունը և ձեր տրամադրած տեղեկատվությունը պաշտպանելու համար ամեն անգամ Պորտալ մուտքգործելիս ձեզ անհրաժեշտ կլինի հաստատման կոդ: Տվյալների փոխանցման և հաղորդագրությունների ուղարկման համար կարող են կիրառվել սակագներ:




2




Գրանցեք ձեր էլփոստի հասցեն և հեռախոսահամարը:

3




Մուտքագրեք հաստատման կոդը:

# Ընտրել դիմում

Lendistry-ի պորտալի հաշիվ ստեղծելուց հետո դուք կվերահղվեք դեպի Պորտալի կառավարման վահանակ՝ դիմում ընտրելու համար:

Իրավասու ոչ կոմերցիոն կատարողական արվեստի կազմակերպությունները (տես Սահմանումները 3-րդ էջում) կարող են դիմում ներկայացնել Կալիֆոռնիայի ոչ կոմերցիոն կատարողական արվեստի դրամաշնորհային ծրագրի համար ինքնուրույն կամ ֆինանսական հովանավորի միջոցով:

1. Եթե դուք ֆինանսական հովանավոր եք, որը դիմում է դրամաշնորհի համար իրավասու, ֆինանսական հովանավոր հանդիսացող կազմակերպության անունից, ընտրեք այն դիմումը, որը կոչվում է «**Դիմել մեկ այլ ոչ կոմերցիոն կազմակերպության համար՝ որպես ֆինանսական հովանավոր**»:

2. Եթե դուք իրավասու կազմակերպություն եք կամ ֆինանսական հովանավոր, որը դիմում է սեփական կազմակերպության համար, օգտագործեք այն դիմումը, որը կոչվում է «**Դիմել սեփական ոչ կոմերցիոն կազմակերպության համար**»:




**Կարևոր դիտողություն.**

- Ֆինանսական հովանավորը կարող է բազմաթիվ դիմումներ ներկայացնել, սակայն յուրաքանչյուր ֆինանսապես հովանավորվող կազմակերպության համար թույլատրվում է միայն մեկ դիմում ներկայացնել: Ֆինանսապես հովանավորվող կազմակերպության համար մի քանի դիմում ներկայացնելը կարող է դիտվել որպես հնարավոր խարդախություն և խաթարել ձեր դիմումի քննման գործընթացը:



CALIFORNIA
Nonprofit Performing Arts Grant Program

APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

# Դիմել որպես ֆինանսական հովանավոր

## Կորպորատիվ ֆինանսական հովանավորի պաշտոնական ներկայացուցչի մասին տեղեկություններ

- Պաշտոնական ներկայացուցչի անունը
- Պաշտոնական ներկայացուցչի ազգանունը
- Էլփոստ (Նշեք այն էլփոստը, որը գրանցել եք Lendistry-ի պորտալում):
- Բնակության հասցեի 1-ին տող (փոստային կոդը չնշել)
- Բնակության հասցեի 2-րդ տող (փոստային կոդը չնշել)
- Բնակության քաղաք
- Բնակության նահանգ
- Բնակության փոստային կոդ
- Պաշտոնական ներկայացուցչի ծննդյան ամսաթիվ
- Պաշտոնական ներկայացուցչի սոցիալական ապահովության կամ հարկ վճարողի անհատական նույնականացման համարը (SSN կամ ITIN)[1]
- Պաշտոնը/դիրքը
- Ուղղորդող գործընկեր[2]
- Հայտատուի ռասան[3]
- Սեռը[3]
- Հայտատուի էթնիկ պատկանելությունը[3]
- Պաշտոնական ներկայացուցչի նախընտրելի հեռախոսահամարը (Նշեք այն բջջային հեռախոսահամարը, որը գրանցել եք Lendistry-ի պորտալում):
- Համաձայնություն ավտոմատ զանգերին կամ տեքստային հաղորդագրություններին[4]

[1]Անպայման հարկավոր է հավաստիանալ, որ հայտատուն ներառված չէ OFAC-ի ցուցակում:
[2]Ձեր ընտրած ուղղորդող գործընկերը չի ազդի ձեր դիմումի քննման գործընթացի վրա:
[3]Ձեր պատասխանը չի ազդի ձեր դիմումի քննման գործընթացի վրա:
[4]Նշեք վանդակը, եթե ցանկանում եք թարմացված տեղեկատվություն ստանալ ձեր դիմումի վերաբերյալ SMS-ով/տեքստային հաղորդագրությամբ՝ դիմումի քննման գործընթացի ընթացքում:



# Բաժին 2. Բիզնեսի վերաբերյալ տեղեկություններ 1



## Պատմեք մեզ ձեր ֆինանսական հովանավոր հանդիսացող կազմակերպության մասին

- Ֆինանսական հովանավորի բիզնեսի իրավաբանական անվանումը
- Բիզնեսի վարում այլ անունով/«DBA» (եթե կիրառելի է)
- Ձեր բիզնեսն ունի՞ գործատուի նույնականացման համար (EIN)
  - Եթե այո, մուտքագրեք ձեր EIN-ը:
- Բիզնեսի հասցեի 1-ին տող (Մուտքագրեք բիզնեսի ֆիզիկական հասցեն)
- Բիզնեսի հասցեի 2-րդ տող (Մուտքագրեք բիզնեսի ֆիզիկական հասցեն)
- Բիզնեսի քաղաքը
- Բիզնեսի նահանգը
- Բիզնեսի փոստային կոդը
- Բիզնեսի հեռախոսահամարը
- Ձեր բիզնեսը շահույթ չհետապնդո՞ղ, թե՞ շահույթ հետապնդող բիզնես է:
- Բիզնես սուբյեկտի տեսակը
- Բիզնեսի կազմակերպչական ձևը
- Ձեր ֆինանսական հովանավոր հանդիսացող կազմակերպության ստեղծման ամսաթիվը
- Բիզնեսի վեբկայքը (եթե կիրառելի է)



# Բաժին 3. Բիզնեսի վերաբերյալ տեղեկություններ 2



## Ֆինանսապես հովանավորվող ոչ կոմերցիոն կազմակերպություն (կոչվում է «Հովանավորյալ»)

- Հովանավորյալ կազմակերպության իրավաբանական անվանումը
- Հովանավորյալ կազմակերպության EIN-ը
- Հովանավորյալ կազմակերպության ստեղծման ամսաթիվը
- Ֆոնդերի առաջնային օգտագործումը Հովանավորյալ կազմակերպության համար
- Հովանավորյալի կողմից պահանջվող գումարի չափը
- Հովանավորյալի տարեկան համախառն եկամուտը 2019 թվականին (այն պետք է համապատասխանի հովանավորյալի հարկային հայտարարագրին)
- Հովանավորյալի տարեկան համախառն եկամուտը 2020 թվականին (այն պետք է համապատասխանի հովանավորյալի հարկային հայտարարագրին)
- Այս դրամաշնորհը նոր աշխատատեղեր կստեղծի՞ Հովանավորյալի համար։
- Հովանավորյալ կազմակերպությունը 2020 թվականին ունեցել է լրիվ դրույքով աշխատող # աշխատողներ
- Հովանավորյալ կազմակերպությունը 2020 թվականին ունեցել է կես դրույքով աշխատող # աշխատողներ
- Հովանավորյալ կազմակերպությունը 2020 թվականին ստեղծել է լրիվ դրույքով # աշխատատեղ
- Հովանավորյալ կազմակերպությունը 2020 թվականին պահպանել է # աշխատատեղ



# Բաժին 4. Ժողովրդագրական տվյալներ



## Ավելի շատ տեղեկություններ տվեք մեզ ձեր Հովանավորյալի մասին

- Ովքե՞ր են Հովանավորյալի հիմնական հաճախորդները
- Հովանավորյալի NAICS կոդը
- Հովանավորյալ կազմակերպությունը կնո՞ջ է պատկանում
- Հովանավորյալ կազմակերպությունը վետերանի՞ է պատկանում
- Հովանավորյալ կազմակերպությունը հաշմանդամություն ունեցող անձի՞ է պատկանում
- Հովանավորյալ կազմակերպությունը ֆրանչայզինգայի՞ն ընկերություն է
- Հովանավորյալ կազմակերպությունը գյուղական տարածքու՞մ է գտնվում



Եվս մի քանի հարց, որոնք կօգնեն պարզել Հովանավորյալի իրավունակությունը (Այս տեղեկատվությունը Հովանավորյալի համար է):

- Դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ արդյո՞ք ձեր Հովանավորյալի կազմակերպությունը բաց է և գործում է
- Քանի՞ ամիս է գործել Հովանավորյալը 2020 թվականին
- Արդյո՞ք Հովանավորյալը ընդհանուր առմամբ համապատասխանում է դաշնային, նահանգային և տեղական կիրառելի օրենքներին, կանոնակարգերին, օրենսգրքերին և պահանջներին:
- Արդյո՞ք Հովանավորյալը գրանցել է բիզնեսը Կալիֆոռնիայի Արդարադատության վարչության բարեգործական ֆոնդի գրանցամատյանում:
- Արդյո՞ք Հովանավորյալը չի մուծել դաշնային, նահանգային կամ տեղական որևէ հարկ և չունի հաստատված գումարի մարման, հետաձգման պլան կամ համաձայն չէ համապատասխան դաշնային, նահանգային և տեղական հարկային մարմինների որոշման հետ:
- Արդյո՞ք Հայտատուի որևէ պաշտոնական ներկայացուցիչ կամ խորհրդի անդամ կամ Հայտատուի իրավասու, ֆինանսական հովանավոր հանդիսացող կազմակերպությունը, եթե կիրառելի է, նախորդ երեք տարիների ընթացքում դատապարտվել է կամ քաղաքացիական վճիռ է կայացվել այդ պաշտոնական ներկայացուցչի կամ խորհրդի անդամի նկատմամբ կամ պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել է կամ ինչ-որ փորձաշրջան է սահմանվել նրա համար (այդ թվում՝ մինչև դատավճիռը փորձաշրջան)՝ (i) խարդախության կամ քրեական հանցագործության համար՝ կապված հրապարակային գործարքի (դաշնային, նահանգային կամ տեղական) կամ պայմանագրի ձեռքբերման, ձեռքբերման փորձի կամ կատարելու համար, (ii) դաշնային կամ նահանգային հակամենաշնորհային կամ գնումների կանոնադրության խախտման համար, կամ (iii) յուրացման, գողության, կեղծարարության, կաշառակերության, փաստաթղթերի կեղծման կամ ոչնչացման, կեղծ հայտարարություններ անելու կամ գողացված գույքը սեփականացնելու համար, կամ (բ) արդյո՞ք Հայտատուի որևէ պաշտոնական ներկայացուցչի կամ խորհրդի անդամի կամ Հայտատուի իրավասու ֆինանսական հովանավոր հանդիսացող կազմակերպությանը, եթե կիրառելի է, ներկայումս մեղադրանք է առաջադրվել կամ այլ քրեական կամ քաղաքացիական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում է կայացվել պետական մարմնի կողմից (դաշնային, նահանգային կամ տեղական)՝ վերոնշյալ (ա) կետում նշված հանցագործությունների համար:



# Բաժին 6. Ինքնության ստուգում

Այս բաժնում դուք պետք է հաստատեք ձեր ինքնությունը՝ օգտագործելով Persona հարթակը՝ վերբեռնելով պետության կողմից տրված վավեր անձը հաստատող փաստաթուղթը: Դուք նաև պետք է ինքնալուսանկար անեք՝ օգտագործելով տեսախցիկ ունեցող համապատասխան սարքը:

## Ի՞նչ է իրենից ներկայացնում Persona-ն

Persona-ն երրորդ կողմի հարթակ է, որից օգտվում է Lendistry-ն՝ խարդախության կանխարգելման և դրա հետևանքների մեղմացման համար: Persona հարթակը Lendistry-ին հնարավորություն է տալիս ստուգել անձի ինքնությունը և թույլ չտալ, որպեսզի անձն իր ինքնությունը կեղծի՝ նրա ինքնալուսանկարը ավտոմատ կերպով համեմատելով նրա անձը հաստատող փաստաթղթի դիմանկարի հետ՝ 3 կողմից զննելով և կենսաչափական տվյալները ստուգելով:



# Բաժին 7. Ֆինանսական հովանավորի բանկային տվյալներ

CALIFORNIA
Nonprofit Performing Arts Grant Program
APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

## Ինչու՞ են մեզ հարկավոր ձեր բանկային տվյալները

Lendistry-ն օգտագործում է երրորդ կողմի տեխնոլոգիան (Plaid)՝ ACH վճարային համակարգով փոխանցումներ կատարելու համար՝ կապակցելով ԱՄՆ-ի ցանկացած բանկի կամ վարկային միության հաշիվները Lendistry-ի պորտալի նման հավելվածին: Երրորդ կողմը չի կիսվում ձեր անձնական տվյալներով առանց ձեր թույլտվության և չի վաճառում կամ վարձով տալիս դրանք արտաքին ընկերություններին: Lendistry-ն օգտագործում է այս տեխնոլոգիան՝ միայն ձեր բանկային քաղվածքները ստուգելու համար:

Բանկային տվյալների ստացման այս եղանակը նախընտրելի է, բայց միշտ չէ, որ աշխատում է, եթե ձեր բանկային հաստատությունը հասանելի չէ պրովայդերի միջոցով: Այս դեպքում դուք կարող եք հաստատել ձեր բանկային հաշիվը՝ կապ հաստատելով Lendistry-ի հետ 866-759-5320 հեռախոսահամարով:




1




Անցեք Plaid:

2




Գտեք ձեր բանկային հաստատությունը:

3




Մուտք գործեք ձեր առցանց բանկային հաշիվ:

4




Հաստատեք թույլտվությունը:

# Բաժին 8. Վերբեռնել փաստաթղթեր



## Քայլ 1

Ընտրեք վերբեռնման պատկերակը՝ ձեր սարքում փաստաթղթի ֆայլը գտնելու համար:

## Քայլ 2

Եթե ֆայլը պաշտպանված է գաղտնաբառով, «**Գաղտնաբառով պաշտպանվա՞ծ է**» հարցով ընտրացանկից ընտրեք ԱՅՈ և մուտքագրեք ֆայլի գաղտնաբառը: Եթե ֆայլը գաղտնաբառով պաշտպանված չէ, ընտրեք ՈՉ:




Ընտրված է **ԱՅՈ**, եթե ֆայլը պաշտպանված է գաղտնաբառով:




Ընտրված է **ՈՉ**, եթե ֆայլը չունի գաղտնաբառ:

## Քայլ 3

Կարգավիճակը պետք է փոխվի՝ «Պահանջվում է»-ից դառնալով «Ներկայացված է»:

## Քայլ 4

Կրկնեք վերոնշյալ քայլերը, մինչև բոլոր փաստաթղթերը վերբեռնվեն:



# Բաժին 9. Նախքան ուղարկելը Դիմումի վերանայում

Նախքան ձեր դիմումը ներկայացնելը, դուք կկարողանաք վերանայել ձեր պատասխանները: Դուք պետք է լրացնեք դիմումի **բոլոր բաժինները**, որպեսզի կարողանաք այն ուղարկել: Դա ներառում է՝

- Դիմումաձևի բոլոր դաշտերի լրացում,
- Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի վերբեռնում,
- Ձեր բանկային հաշվի հաստատում, և
- Ձեր ինքնության ստուգում:

## Ձեր դիմումի վերանայումը

1. Եթե ձեզ անհրաժեշտ է խմբագրել ձեր դիմումը, սեղմեք «**Ես որոշ բաներ պետք է խմբագրեմ**» և ուղղեք բոլոր սխալները:
2. Կարդացեք Պայմաններն ու դրույթները և նշեք վանդակը, եթե համաձայն եք:
3. Եթե ցանկանում եք ավելի ուշ վերանայել և ներկայացնել ձեր դիմումը, սեղմեք «**Պահպանել և վերադառնալ ավելի ուշ**»: Դուք ցանկացած պահի կարող եք մուտք գործել Պորտալ՝ ձեր դիմումը կառավարելու համար: Պորտալում դուք կարող եք ավարտել և լրացնել ձեր դիմումը, վերբեռնել փաստաթղթեր, կցել ձեր բանկային տվյալները և ստուգել կարգավիճակի թարմացումները:
4. Ձեր դիմումը վերանայելուց և ձեր տրամադրած բոլոր տեղեկությունները վերստուգելուց հետո սեղմեք «**Ներկայացնել**»՝ ձեր դիմումն ուղարկելու համար: <u>Ձեր դիմումը ներկայացնելուց հետո դուք այլևս ՉԵՔ կարողանա խմբագրել ձեր պատասխանները:</u>



# Դիմումի ներկայացում

Դուք կստանաք հաստատման էլ. նամակ այս հասցեից՝ noreply@lendistry.com՝ հաստատելու համար, որ ձեր դիմումը ստացվել է: Եթե լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր անհրաժեշտ լինեն, Lendistry-ն կարող է կապ հաստատել ձեզ հետ էլեկտրոնային փոստով, հեռախոսով և/կամ տեքստային հաղորդագրությամբ (եթե ունի թույլտվություն)՝ ճշտելու ձեր ներկայացրած տեղեկատվությունը: Lendistry-ն կօգնի ձեզ հասկանալ, թե բիզնեսի հետ կապված ինչ տեղեկատվություն է անհրաժեշտ և ինչպես վերբեռնել փաստաթղթերը:

Lendistry-ի հաստատման էլ. նամակները գալիս են այս հասցեից՝ noreply@lendistry.com: Եթե ձեր դիմումը ներկայացնելուց հետո դուք հաստատման էլ. նամակ չեք ստանում, նայեք ձեր սպամի պանակը՝ ճշտելու համար noreply@lendistry.com հասցեից նամակ չե՞ք ստացել, և այդ էլփոստի հասցեն ավելացրեք ձեր էլփոստի հաշվի անվտանգ ուղարկողների ցանկում:

ԽՈՐՀՈՒՐԴ. «Lendistry-ն» ավելացրեք ձեր որոնման տողում:




CALIFORNIA
Nonprofit Performing Arts Grant Program
APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY
Դիմել ձեր ոչ կոմերցիոն կազմակերպության համար

# Բաժին 1. Պաշտոնական ներկայացուցչի տվյալներ

CALIFORNIA
Nonprofit Performing Arts Grant Program
APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

## Կորպորատիվ պաշտոնական ներկայացուցչի մասին տեղեկություններ

- Պաշտոնական ներկայացուցչի անունը
- Պաշտոնական ներկայացուցչի ազգանունը
- Էլփոստ (Նշեք այն էլփոստը, որը գրանցել եք Lendistry-ի պորտալում):
- Բնակության հասցեի 1-ին տող (փոստային կոդը չնշել)
- Բնակության հասցեի 2-րդ տող (փոստային կոդը չնշել)
- Բնակության քաղաք
- Բնակության նահանգ
- Բնակության փոստային կոդ
- Պաշտոնական ներկայացուցչի ծննդյան ամսաթիվ
- Պաշտոնական ներկայացուցչի սոցիալական ապահովության կամ հարկ վճարողի անհատական նույնականացման համարը (SSN կամ ITIN)[1]
- Պաշտոնը/դիրքը
- Ուղղորդող գործընկեր[2]
- Հայտատուի ռասան[3]
- Սեռը[3]
- Հայտատուի էթնիկ պատկանելությունը[3]
- Պաշտոնական ներկայացուցչի նախընտրելի հեռախոսահամարը (Նշեք այն բջջային հեռախոսահամարը, որը գրանցել եք Lendistry-ի պորտալում):
- Համաձայնություն ավտոմատ զանգերին կամ տեքստային հաղորդագրություններին[4]

[1]Անպայման հարկավոր է հավաստիանալ, որ հայտատուն ներառված չէ OFAC-ի ցուցակում:
[2]Ձեր ընտրած ուղղորդող գործընկերը չի ազդի ձեր դիմումի քննման գործընթացի վրա:
[2]Ձեր պատասխանը չի ազդի ձեր դիմումի քննման գործընթացի վրա:
[4]Նշեք վանդակը, եթե ցանկանում եք թարմացված տեղեկատվություն ստանալ ձեր դիմումի վերաբերյալ SMS-ով/տեքստային հաղորդագրությամբ՝ դիմումի քննման գործընթացի ընթացքում:



# Բաժին 2. Բիզնեսի վերաբերյալ տեղեկություններ 1

## Պատմեք մեզ ձեր կազմակերպության մասին

- Բիզնեսի իրավաբանական անվանումը
- Բիզնեսի վարում այլ անունով/«DBA» (եթե կիրառելի է)
- Ձեր բիզնեսն ունի՞ գործատուի նույնականացման համար (EIN)
    - Եթե այո, մուտքագրեք ձեր EIN-ը:
- Բիզնեսի հասցեի 1-ին տող (Մուտքագրեք բիզնեսի ֆիզիկական հասցեն)
- Բիզնեսի հասցեի 2-րդ տող (Մուտքագրեք բիզնեսի ֆիզիկական հասցեն)
- Բիզնեսի քաղաքը
- Բիզնեսի նահանգը
- Բիզնեսի փոստային կոդը
- Բիզնեսի հեռախոսահամարը
- Ձեր բիզնեսը շահույթ չհետապնդո՞ղ, թե՞ շահույթ հետապնդող բիզնես է:
- Բիզնես սուբյեկտի տեսակը
- Բիզնեսի կազմակերպչական ձևը
- Ձեր ֆինանսական հովանավոր հանդիսացող կազմակերպության ստեղծման ամսաթիվը
- Բիզնեսի վեբկայքը (եթե կիրառելի է)



# Բաժին 3. Բիզնեսի վերաբերյալ տեղեկություններ 2

CALIFORNIA
Nonprofit Performing Arts Grant Program
APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

## Ինչո՞վ կարող ենք ձեզ օգնել

- Դրամաշնորհի առաջնային օգտագործումը
- Պահանջվող գումարի չափը
- Տարեկան համախառն եկամուտը 2019 թվականին (այն պետք է համապատասխանի ձեր հարկային հայտարարագրին)
- Տարեկան համախառն եկամուտը 2020 թվականին (այն պետք է համապատասխանի ձեր հարկային հայտարարագրին)
- Այս դրամաշնորհը նոր աշխատատեղեր կստեղծի՞
- Ձեր բիզնեսը 2020 թվականին ունեցել է լրիվ դրույքով աշխատող # աշխատողներ
- Ձեր բիզնեսը 2020 թվականին ունեցել է կես դրույքով աշխատող # աշխատողներ
- 2020 թվականին ձեր բիզնեսը ստեղծել է # աշխատատեղ
- 2020 թվականին ձեր բիզնեսը պահպանել է # աշխատատեղ



# Բաժին 4. Ժողովրդագրական տվյալներ



## Պատմեք մեզ ձեր կազմակերպության մասին

- Ովքե՞ր են ձեր հիմնական հաճախորդները
- ՀՅՈՒՍԻՍԱՄԵՐԻԿՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (NAICS) ԿՈԴԸ
- Բիզնեսը կնո՞ջ է պատկանում
- Բիզնեսը վետերանի՞ է պատկանում
- Բիզնեսը հաշմանդամություն ունեցող անձի՞ է պատկանում
- Բիզնեսը ֆրանչայզինգայի՞ն ընկերություն է
- Բիզնեսը գյուղակա՞ն տարածքում է



## Եվս մի քանի հարց, որոնք կօգնեն պարզել ձեր իրավունակությունը

- Դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ արդյո՞ք ձեր բիզնեսը բաց է և գործում է:
- Քանի՞ ամիս է գործել ձեր բիզնեսը 2020 թվականին:
- Արդյո՞ք ձեր բիզնեսը ընդհանուր առմամբ համապատասխանում է դաշնային, նահանգային և տեղական կիրառելի օրենքներին, կանոնակարգերին, օրենսգրքերին և պահանջներին:
- Արդյո՞ք դուք գրանցել եք ձեր բիզնեսը Կալիֆոռնիայի Արդարադատության վարչության բարեգործական ֆոնդի գրանցամատյանում:
- Արդյո՞ք դուք չեք մուծել դաշնային, նահանգային կամ տեղական որևէ հարկ և չունեք հաստատված գումարի մարման, հետաձգման պլան կամ համաձայն չեք համապատասխան դաշնային, նահանգային և տեղական հարկային մարմինների որոշման հետ:
- «(ա) Արդյո՞ք Հայտատուի որևէ պաշտոնական ներկայացուցիչ կամ խորհրդի անդամ կամ Հայտատուի իրավասու, ֆինանսական հովանավոր հանդիսացող կազմակերպությունը, եթե կիրառելի է, նախորդ երեք տարիների ընթացքում դատապարտվել է կամ քաղաքացիական վճիռ է կայացվել այդ պաշտոնական ներկայացուցչի կամ խորհրդի անդամի նկատմամբ կամ պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել է կամ ինչ-որ փորձաշրջան է սահմանվել նրա համար (այդ թվում՝ մինչև դատավճիռը փորձաշրջան)՝ (i) խարդախության կամ քրեական հանցագործության համար՝ կապված հրապարակային գործարքի (դաշնային, նահանգային կամ տեղական) կամ պայմանագրի ձեռքբերման, ձեռքբերման փորձի կամ կատարելու համար, (ii) դաշնային կամ նահանգային հակամենաշնորհային կամ գնումների կանոնադրության խախտման համար, կամ (iii) յուրացման, գողության, կեղծարարության, կաշառակերության, փաստաթղթերի կեղծման կամ ոչնչացման, կեղծ հայտարարություններ անելու կամ գողացված գույքը սեփականացնելու համար, կամ (բ) արդյո՞ք Հայտատուի որևէ պաշտոնական ներկայացուցչի կամ խորհրդի անդամի կամ Հայտատուի իրավասու ֆինանսական հովանավոր հանդիսացող կազմակերպությանը, եթե կիրառելի է, ներկայումս մեղադրանք է առաջադրվել կամ այլ քրեական կամ քաղաքացիական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում է կայացվել պետական մարմնի կողմից (դաշնային, նահանգային կամ տեղական)՝ վերոնշյալ (ա) կետում նշված հանցագործությունների համար:



# Բաժին 6. Ինքնության ստուգում



Այս բաժնում դուք պետք է հաստատեք ձեր ինքնությունը՝ օգտագործելով Persona հարթակը՝ վերբեռնելով պետության կողմից տրված վավեր անձը հաստատող փաստաթուղթը: Դուք նաև պետք է ինքնալուսանկար անեք՝ օգտագործելով տեսախցիկ ունեցող համապատասխան սարքը:

### Ի՞նչ է իրենից ներկայացնում Persona-ն

Persona-ն երրորդ կողմի հարթակ է, որից օգտվում է Lendistry-ն՝ խարդախության կանխարգելման և դրա հետևանքների մեղմացման համար: Persona հարթակը Lendistry-ին հնարավորություն է տալիս ստուգել անձի ինքնությունը և թույլ չտալ, որպեսզի անձն իր ինքնությունը կեղծի՝ նրա ինքնալուսանկարը ավտոմատ կերպով համեմատելով նրա անձը հաստատող փաստաթղթի դիմանկարի հետ՝ 3 կողմից զննելով և կենսաչափական տվյալները ստուգելով:



# Բաժին 7. Բանկային տվյալներ

**Ինչո՞ւ են մեզ հարկավոր ձեր բանկային տվյալները**

Lendistry-ն օգտագործում է երրորդ կողմի տեխնոլոգիան (Plaid)՝ ACH վճարային համակարգով փոխանցումներ կատարելու համար՝ կապակցելով ԱՄՆ-ի ցանկացած բանկի կամ վարկային միության հաշիվները Lendistry-ի պորտալի նման հավելվածին: Երրորդ կողմը չի կիսվում ձեր անձնական տվյալներով առանց ձեր թույլտվության և չի վաճառում կամ վարձով տալիս դրանք արտաքին ընկերություններին: Lendistry-ն օգտագործում է այս տեխնոլոգիան՝ միայն ձեր բանկային քաղվածքները ստուգելու համար:

Բանկային տվյալների ստուգման այս եղանակը նախընտրելի է, բայց միշտ չէ, որ աշխատում է, եթե ձեր բանկային հաստատությունը հասանելի չէ պրովայդերի միջոցով: Այս դեպքում դուք կարող եք հաստատել ձեր բանկային հաշիվը՝ կապ հաստատելով Lendistry-ի հետ 866-759-5320 հեռախոսահամարով:







Անցեք Plaid:

Գտեք ձեր բանկային հաստատությունը:

Մուտք գործեք ձեր առցանց բանկային հաշիվ:

Հաստատեք թույլտվությունը:

# Բաժին 8. Վերբեռնել փաստաթղթեր

## Քայլ 1

Ընտրեք վերբեռնման պատկերակը՝ ձեր սարքում փաստաթղթի ֆայլը գտնելու համար:

## Քայլ 2

Եթե ֆայլը պաշտպանված է գաղտնաբառով, «**Գաղտնաբառով պաշտպանվա՞ծ է**» հարցով ընտրացանկից ընտրեք ԱՅՈ և մուտքագրեք ֆայլի գաղտնաբառը: Եթե ֆայլը գաղտնաբառով պաշտպանված չէ, ընտրեք ՈՉ:




Ընտրված է **ԱՅՈ**, եթե ֆայլը պաշտպանված է գաղտնաբառով:




Ընտրված է **ՈՉ**, եթե ֆայլը չունի գաղտնաբառ:

## Քայլ 3

Կարգավիճակը պետք է փոխվի՝ «Պահանջվում է»-ից դառնալով «Ներկայացված է»:

## Քայլ 4

Կրկնեք վերոնշյալ քայլերը, մինչև բոլոր փաստաթղթերը վերբեռնվեն:



# Բաժին 9. Նախքան ուղարկելը Դիմումի վերանայում

Նախքան ձեր դիմումը ներկայացնելը, դուք կկարողանաք վերանայել ձեր պատասխանները: Դուք պետք է լրացնեք դիմումի **բոլոր բաժինները**, որպեսզի կարողանաք այն ուղարկել: Դա ներառում է՝

- Դիմումաձևի բոլոր դաշտերի լրացում,
- Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի վերբեռնում,
- Ձեր բանկային հաշվի հաստատում, և
- Ձեր ինքնության ստուգում:

## Ձեր դիմումի վերանայումը

1. Եթե ձեզ անհրաժեշտ է խմբագրել ձեր դիմումը, սեղմեք «**Ես որոշ բաներ պետք է խմբագրեմ**» և ուղղեք բոլոր սխալները:
2. Կարդացեք Պայմաններն ու դրույթները և նշեք վանդակը, եթե համաձայն եք:
3. Եթե ցանկանում եք ավելի ուշ վերանայել և ներկայացնել ձեր դիմումը, սեղմեք «**Պահպանել և վերադառնալ ավելի ուշ**»: Դուք ցանկացած պահի կարող եք մուտք գործել Պորտալ՝ ձեր դիմումը կառավարելու համար: Պորտալում դուք կարող եք ավարտել և լրացնել ձեր դիմումը, վերբեռնել փաստաթղթեր, կցել ձեր բանկային տվյալները և ստուգել կարգավիճակի թարմացումները:
4. Ձեր դիմումը վերանայելուց և ձեր տրամադրած բոլոր տեղեկությունները վերստուգելուց հետո սեղմեք «**Ներկայացնել**»՝ ձեր դիմումն ուղարկելու համար: Ձեր դիմումը ներկայացնելուց հետո դուք այլևս ՉԵՔ կարողանա խմբագրել ձեր պատասխանները:



# Դիմումի ներկայացում

Դուք կստանաք հաստատման էլ. նամակ այս հասցեից՝ noreply@lendistry.com՝ հաստատելու համար, որ ձեր դիմումը ստացվել է: Եթե լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր անհրաժեշտ լինեն, Lendistry-ն կարող է կապ հաստատել ձեզ հետ էլեկտրոնային փոստով, հեռախոսով և/կամ տեքստային հաղորդագրությամբ (եթե ունի թույլտվություն)՝ ճշտելու ձեր ներկայացրած տեղեկատվությունը: Lendistry-ն կօգնի ձեզ հասկանալ, թե բիզնեսի հետ կապված ինչ տեղեկատվություն է անհրաժեշտ և ինչպես վերբեռնել փաստաթղթերը:

Lendistry-ի հաստատման էլ. նամակները գալիս են այս հասցեից՝ noreply@lendistry.com: Եթե ձեր դիմումը ներկայացնելուց հետո դուք հաստատման էլ. նամակ չեք ստանում, նայեք ձեր սպամի պանակը՝ ճշտելու համար noreply@lendistry.com հասցեից նամակ չե՞ք ստացել, և այդ էլփոստի հասցեն ավելացրեք ձեր էլփոստի հաշվի անվտանգ ուղարկողների ցանկում:

ԽՈՐՀՈՒՐԴ. «Lendistry-ն» ավելացրեք ձեր որոնման տողում:





CALIFORNIA
Nonprofit Performing Arts Grant Program
APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

# Ստուգման գործընթացը

# Ստուգման գործընթաց

CALIFORNIA
Nonprofit Performing Arts Grant Program
APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

**Ինչպե՞ս կիմանամ, որ ինձ դրամաշնորհ են տրամադրել:**
Այս ծրագրի համար դիմումի գործընթացն ունի վավերացման մի քանի փուլ: Դրամաշնորհի համար հավակնելու համար նախ պետք է բավարարեք ծրագրի համապատասխանության նվազագույն պահանջները: **Կարևոր դիտողություն. Նվազագույն համապատասխանության պահանջների բավարարումը չի երաշխավորում դրամաշնորհի տրամադրումը:**

Երբ որոշում են, որ դուք համապատասխանում եք այս ծրագրին, ձեր դիմումն այնուհետև անցնում է վերջնական վավերացման փուլ՝ որոշելու համար՝ ձեզ հաստատո՞ւմ, թե՞ մերժում են ֆինանսավորում տրամադրել: Վավերացման այս գործընթացի շրջանակներում **ձեզանից կպահանջվի հաստատել որոշ տեղեկություններ ուղիղ հեռախոսակապով:** Lendistry-ի թիմի անդամը կապ կհաստատի անմիջապես ձեզ հետ՝ այս գործընթացն ավարտելու համար:

Ձեր դիմումն ամբողջովին վավերացնելուց հետո դուք նամակ կստանաք Lendistry-ից, որով ձեզ կտեղեկացվի, որ ձեզ հաստատել կամ մերժել են տրամադրել դրամաշնորհային ֆինանսավորում:

**Ինչպե՞ս կարող եմ ստուգել իմ դիմումի կարգավիճակը:**
Դուք ցանկացած պահի կարող եք ստուգել ձեր դիմումի կարգավիճակը՝ մուտք գործելով Lendistry-ի պորտալ՝ օգտագործելով ձեր գրանցած օգտանունը, գաղտնաբառը և բջջային համարը: Մուտք գործելուց հետո կարգավիճակը կհայտնվի կառավարման վահանակին:

**Մուտք գործեք Lendistry-ի պորտալ այստեղ՝**
canppa.mylendistry.com/landing

**Իմ փաստաթղթերը և բանկային տվյալները ամբողջովին վավերացվել են, և ինձ հաստատել են ֆինանսավորման համար: Ե՞րբ ես կստանամ ֆինանսավորումը:**
Երբ ձեր դիմումը ամբողջովին վավերացվի և հաստատվի դրամաշնորհային ֆինանսավորման համար, ձեր դրամաշնորհառուի համաձայնագիրը և W-9 ձևը հասանելի կդառնան ձեզ՝ **DocuSign-ի փաստաթղթի** տեսքով Lendistry-ի պորտալում: Մուտք գործեք և հետևեք DocuSign-ի հրահանգներին՝ երկու փաստաթղթերում ձեր անվան սկզբնատառերը դնելու, ստորագրելու և ամսաթիվը նշելու համար:

**Մուտք գործեք Lendistry-ի պորտալ այստեղ՝** canppa.mylendistry.com/landing

**Կարևոր դիտողություն. Ձեր դրամական միջոցները ձեզ չեն տրամադրվի այնքան ժամանակ, քանի դեռ դա չեք լրացրել:**



# Հեռախոսազանգերի սպասարկման կենտրոն

## 866-759-5320

երկուշաբթիից ուրբաթ,
ժամը 7:00 – 19:00 Խաղաղօվկիանոսյան ստանդարտ ժամանակ (PST)

Արագ հղումներ՝

Ծրագրի համառոտ նկարագրություն
Համապատասխանության չափանիշներ
Տրամադրվող դրամաշնորհի. Գումարի չափը
Պահանջվող փաստաթղթեր
Դիմումի ներկայացման գործընթացը
Դիմել որպես ֆինանսական հովանավոր
Դիմել ձեր ոչ կոմերցիոն կազմակերպության համար
Ստուգման գործընթացը

CALIFORNIA
**Nonprofit Performing Arts Grant Program**

APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY